ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ 2018-2019 ուստարի

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր (ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60 րոպե:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. *Լրացնել տեքստում բաց թողած տառերը.*

Լենկթեմուրը ներխուժել էր Հայաստան: Բա__բերները նրան հայտնեցին, որ մոտակայքում մի ու__տատեղի կա, որտեղ գտնվում է հայոց յոթ ու__տաբեռանոց աղամանդը: Կաղ զավ__իչի ախորժակը գ__գռվեց. նա արշավեց դեպի սր__ավայրը: Բայց հենց մոտեցան վանքին, Լենկթեմուրի զինվորներն սկսեցին ցավերի մեջ գալարվել ու մեռնել: Բռնակալը հասկացավ, որ այն գերբնական զ__րություն ունի: Առանց հա__շտակելու որև__ բան՝ նա հա__շտապ հեռացավ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Ընդգծել այն բառերը, որոնք գրվում են մեծատառով.

ա/ ԲՈԼՈՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՍԻՐՈՒՄ ԵՆ ՄԵԾ ԳՐՈՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ՝ «ՉԱԽՉԱԽ ԹԱԳԱՎՈՐ», «ՔԱՋ ՆԱԶԱՐԸ» ԵՎ ԱՅԼՆ:

բ/ ՓԱՅՏԱԿԱՐԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ՆԱՀԱՆԳՆ ԷՐ ԿՈՒՐ ԵՎ ԵՐԱՍԽ ԳԵՏԵՐԻ ՍՏՈՐԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ:

գ/ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ԻՄԱՍՏԱՍԵՐ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻՆ ԾՆՎԵԼ Է ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ, ԱՇԱԿԵՐՏԵԼ Է ԿԱՐԿԱՌՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑՈՒՆ:

դ/ ՀԻՆԱՎՈՒՐՑ ՀԻՇԱՏԱԿՆԵՐՈՎ ՀԱՅՏՆԻ ԱՂԹԱՄԱՐ ԿՂԶԻՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ՎԱՆԱ ԼՃԻ ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ, ՆՐԱ ԴԻՄԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐՎՈՍ ԼԵՌՆԱՇՂԹԱՅԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԿԱՊՈՒՏԿՈՂ ԼԵՌՆ Է:

ե/ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԸ ԿԱՆԳ ԱՌԱՎ ԳՐԱՍԵՂԱՆԻ ՄՈՏ ԵՎ ՀԱՅԱՑՔՆ ՈՒՂՂԵՑ ԷԴԳԱՐ ՇԱՀԻՆԻ «ՓԱՐԻԶՈՒՀԻՆ ԿԱՌՔՈՒՄ» ՆԿԱՐԻՆ ԵՎ ՍԿՍԵՑ ԽՈՐՀԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Սյունակներից առանձնացնել և կողք կողքի գրել հոմանիշ բառերը (հոմանիշների եռյակ).

1. պաշտել	1. ապականել	1. ոգեշնչել
2. թեավորել	2. ալեկոծվել	2.մեծարել
3. պղծել	3. երկրպագել	3. վշտակցել
4. ծփալ	4. ցավակցել	4. արատավորել
5. կարեկցել	5.գոտեպնդել	5. ծածանվել

_____

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. *Կազմել տրված գոյականների հոգնակի թիվը.*

ոտնաձայն _____

*հեռագիր*_____

պատմագիր _____

*հրացան*_____

*կին*_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Ընդգծել ածականի գերադրական աստիճանի օրինակները.

թեթևագույն, ծղոտագույն, վարդագույն, առավելագույն, մոխրագույն, ազնվագույն, ժանգագույն, հազարագույն, լավագույն, գերագույն:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Սյունակներում առանձնացնել որակական և հարաբերական ածականները.
արևելյան, ջանասեր, բարձր, լեռնային, մարդկային, գեղեցիկ, լուսեղեն, օդային, հմուտ, կույր:

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ	ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Առանձնացնել և սյունակներում գրել.
Արագ, այդ, հիմա, նույնպես, դանդաղ, միշտ, ամենուր, սույն, իրար, այսպես:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ	ՄԱԿԲԱՅՆԵՐ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Տրված թվականները գրել բառերով.

910_____

1899_____

1600005_____

XXVIII _____

61-րդ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Որոշել տրված բայերի *եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.*

Բերել եմ _____

Գնային_____

Կկարդան_____

Պիտի հպարտանանք_____

Նայե՛ք_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի հերթականությունը.

ա/ Մութ, գիշեր, խորհրդավոր, լռություն, խախտել, միայն, եղեգներ, խշշոց:

_____

_____

բ/ Աննա, անհանգիստ, սիրտ, թպրտալ, անորոշ, հուզմունք, ու, երջանկություն:

_____

_____

գ/ Հանկարծ, անծանոթ, գեղեցկուհի, հայացք, պատահմամբ, հանդիպել, Հունանյան, հայացքին:

_____

_____

դ/ Գյուղ, աղբյուր, մոտ, թխկի, տակ, միայնակ, կանգնել, Մարան:

_____

_____

ե/ Մասիս, գագաթ, փայլփլել, ոսկեվառ, շող, որոնք, աչք, շլացնել:

_____

_____